Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ
«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Հանրակրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ միջնակարգ կրթությունը պարտադիր է: ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ դատապարտյալն ունի հնարավոր և օրենքով նախատեսված կրթություն ստանալու իրավունք: Նույնաբովանդակ դրույթ է նախատեսված նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 13-րդ հոդվածով:

Եվրոպական բանտային կանոնների համաձայն՝ ազատությունից զրկման ցանկացած վայրում պետք է ապահովվեն ազատությունից զրկված բոլոր անձանց հասանելիությունը կրթական ծրագրերին՝ հնարավորինս ապահովելով դրանց բազմակողմանիությունը և հաշվի առնելով անձի անհատական պահանջմունքներն ու ցանկությունները: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ազատությունից զրկված անչափահասների կրթությանը[1]:

«Կրթության բնագավառում խտրականության դեմ» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1960 թվականի դեկտեմբերի 14-ի կոնվենցիայի (Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 5-ից:) 1-ին հոդվածում ամրագրված է. «1. Սույն Կոնվենցիայի նպատակի համար «խտրականություն» հասկացությունը ներառում է ցանկացած տարբերակում, բացառություն, սահմանափակում կամ նախապատվություն՝ ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքի, ազգային կամ սոցիալական պատկանելության, տնտեսական դրության կամ ծննդի հիմքով, ինչի նպատակը կամ հետևանքն է կրթության բնագավառում հավասար վերաբերմունքի վերացումը կամ խախտումը, մասնավորապես.

ա) որևէ անձի կամ անձանց խմբի՝ ցանկացած տեսակի կամ մակարդակով կրթություն ստանալու հնարավորությունից զրկելը,

բ) որևէ անձի կամ անձանց խմբի կրթությունը ցածր ստանդարտով սահմանափակելը,

գ) որևէ անձի կամ անձանց խմբի համար կրթական առանձին համակարգեր կամ ուսումնական հաստատություններ ստեղծելը կամ պահպանելը, բացի այն դեպքերից, որոնք նախատեսված են Կոնվենցիայի 2-րդ հոդվածի դրույթներով,

դ) որևէ անձի կամ անձանց խմբի մարդկային արժանապատվությանն անհարիր պայմաններ պարտադրելը:

2. Սույն Կոնվենցիայի նպատակների համար «կրթություն» հասկացությունը վերաբերում է կրթության բոլոր տեսակներին ու մակարդակներին և ներառում է կրթություն ստանալու հնարավորությունը, կրթության ստանդարտն ու որակը, ինչպես նաև կրթություն տալու պայմանները:»:

Ներկայումս «Կրթության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասով ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունում տասներկուամյա միջնակարգ կրթությունը պարտադիր է **մինչև սովորողի 19 տարին լրանալը**, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ:

Վերոգրյալի համատեքստում հարկ է փաստել, որ 2015 թվականից մինչև 2019 թվականի սեպտեմբերի 1-ը ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անչափահասների հանրակրթությունը հնարավոր չի եղել ապահովել:

---

[1] Տե՛ս https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae կայքէջում, կանոններ 28.1 և 28.3:

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) քրեակատարողական հիմնարկներում հանրակրթություն իրականացնելու համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) 2018 թվականի մարտի 21-ի թիվ 250-Ա/2 և 251-Ա/2 հրամանների ընդունման արդյունքում է միայն, որ ստացել է հանրակրթական ծրագրերով կրթական գործունեություն իրականացնելու լիցենզիաներ: Նախարարի՝ 2018 թվականի հոկտեմբերի 19-ի N 1398-Ա/2 հրամանով հաստատվել է Կազմակերպության կողմից մշակված ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց հանրակրթական հատուկ հաստատության ուսումնական պլանները (այլընտրանքային/հեղինակային/կրթական ծրագիր): Վերոգրյալի արդյունքում՝ Կազմակերպությանը համապատասխան ֆինանսավորումը հատկացվելուց հետո՝ 2019 թվականի սեպտեմբերի 1-ից, վերջինս իրականացնում է ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված՝ մինչ 19 տարեկան անձանց հանրակրթությունը:

Այդուհանդերձ, հարկ է ընդգծել այն հանգամանքը, որ դատապարտյալների շրջանում բազմաթիվ դեպքեր են արձանագրվում, որ դատապարտյալը, օրինակ, 35 տարեկան է, բայց ունի 2-րդ կամ 5-րդ դասարանի կրթություն: Այսպիսի իրավիճակն ըստ էության ստեղծում է մի շարք խոչընդոտներ. գրագիտության ոչ բավարար մակարդակն ազդում է դատապարտյալի հետ արդյունավետ հաղորդակցություն ապահովելու, տարվող վերասոցիալականացման միջոցառումներն իրապես արդյունավետ և թիրախային անցկացնելու վրա, դատապարտյալը չի կարողանում, առանց բազային կրթության, հավակնել ստանալու ավելի բարձր որակի կրթության կամ ունենալու աշխատաշուկայում պահանջարկ վայելող մասնագիտացում և աշխատանք:

2021 թվականի փետրվար ամսվա դրությամբ իրականացված մոնիթորինգը թույլ է տալիս նշել, որ քրեակատարողական հիմնարկներում են գտնվում **շուրջ 300 թերի միջնակարգ կրթություն ունեցող դատապարտյալներ:**

Այս համատեքստում անդրադառնալով դեռևս 20 դարի սկզբին տիրող իրավիճակին՝ հարկ է փաստել, որ 1920 թվականին ստորագրվել է «Կալանքի ընդհանուր վայրերի մասին կանոնակարգը», որով պարտադիր կրթություն սահմանվեց բոլոր 50 տարեկանը չլրացած բանտարկյալների համար: Ընդ որում՝ հիշյալ կանոնակարգով սահմանված էին ոչ միայն դատապարտյալների կրթական գործընթացը կարգավորող նորմեր, այլև դրանում նկարագրում էր բանտարկյալների հետ կրթական աշխատանքը, ներառյալ ուսումնառության տևողությունը և կազմակերպական բնույթի մյուս հանգամանքները[2]:

Արդյունքում՝ փոփոխությունների և զարգացումների այդ գործընթացից 10 տարի անց բանտերում կրթությունը դարձավ առավել առարկայական, և արդեն 1930-ական թթ.-ներին բանտային աշխատողները պետք է ուշադրություն դարձնեին պատիժ կրող անձանց հետ կրթական և մշակութային հետևյալ աշխատանքներին.

- Բանտարկյալների շրջանում անգրագիտությունն արմատախիլ անելը և նրանց ինքնակրթության մղելն է.
- Գրագետ բանտարկյալների հետ դասերը պետք է անցկացվեն ամեն օր՝ առնվազն 1 ժամ, իսկ գրագիտության վատ հմտություններ ունեցողների հետ՝ առնվազն շաբաթը 2 անգամ.
- Բոլոր անգրագետ և կիսագրագետ մարդիկ պարտավոր են հաճախել դպրոց, եթե նրանց 50 տարեկանը դեռ չի լրացել:

Արդի ժամանակներում արտասահմանյան երկրների փորձի և դրանց՝ նախկինում ունեցած փորձառության և զարգացման պատմության ուսումնասիրությունը ևս վկայում է ազատությունից

---

[2]Տե՛ս Жирнов В. Общеобразовательное обучение осужденных в местах лишения свободы //Преступление и наказание. - 2006. - № 6, էջ 23:

զրկված անձանց կրթությունն ապահովելու դրական միտումների և ընդհանուր ուղղման գործընթացում վերջինիս՝ առանցքային նշանակություն ունեցող տարր հանդիսանալու մասին: Մասնավորապես՝ Մոլդովայի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում (այսուհետ՝ ՔԿՀ) իրականացվող կրթական գործընթացը կարելի է բնութագրել անհատականացված: Այստեղ ևս կրթության իրավունքն ամրագրված է Սահմանադրությամբ (հոդված 35): Հետաքրքիր տարբերություն է այն հանգամանքը, որ քրեակատարողական օրենսգրքով նախատեսվում է պատժի կրման անհատականացում և պլանավորում հասկացությունները, որոնք ենթադրում են պատիժ կրող անձի նկատմամբ անհատական մոտեցումների կիրառում: Վերջինիս շրջանակում որպես ուղղման միջոց են դիտարկվում դաստիարակչական աշխատանքները, մասնագիտական պատրաստումը և **հանրակրթությունը** (հոդված 167): ՔԿՀ-ներում կրթության նպատակ է դիտարկվում «... նրանց համամարդկային համընդհանուր արժեքներին ծանոթացնելը, օրենքին հնազանդեցումը, սոցիալական օգտակար հմտությունների զարգացումը, ինչպես նաև գիտակցության և մշակութային մակարդակի բարձրացումը» (հոդված 242): Մոլդովայի քրեակատարողական ծառայության կողմից հաստատվել է «Բանտարկյալի համար քրեական պատժի կատարման պլանավորման անհատական ծրագիր»-ը, որի հիման վրա 2018 թվականին մշակվել է մեծահասակ և անչափահաս դատապարտյալների համար վերասոցիալականացման անհատական պլանների մեթոդաբանություն: ՔԿՀ-ներում բուն կրթության կազմակերպման տեսանկյունից ընդհանուր միջնակարգ կրթությունը կազմակերպվում է անչափահասների համար՝ համաձայն կրթության, արդարադատության և ֆինանսների նախարարության համատեղ որոշման: Գործող օրենսդրությունը նախատեսում է միջոցառումներ նաև մեծահասակ բանտարկյալների կողմից միջնակարգ կրթության՝ նրանց կողմից ցանկության պարագայում:

Ուկրաինայի Հանրապետությունում կրթության իրավունքը ևս ամրագրված է Սահմանադրությամբ (հոդված 35), իսկ Քրեակատարողական օրենսգրքով սահմանվում են կրթության կազմակերպման որոշ ձևեր, որոնց կարող են հասանելիություն ունենալ բանտարկյալները պատժի կրման ընթացքում: Կրթության կազմակերպման տեսանկյունից հանրակրթությունն իրականացվում է քրեակատարողական հիմնարկի տարածքում տեղակայված ուսումնական հաստատության կողմից:

1952 թվականին Դանիայում ընդունվել է բանտային կրթության կանոնակարգը, որով կրթությունը պետք է կազմակերպվեր խմբային կերպով, հնարավորության դեպքում աշխատանքային զբաղվածության ժամերից հետո: Այն ամրագրում էր նաև կրթության պարտադիր պահանջը մինչև 30 տարեկան բոլոր պատիժ կրող անձանց համար: Նրանք պետք է մասնակցեն դանիերենի, հիմնական գրագիտության, ինչպես նաև մաթեմատիկայի, քաղաքացիական դաստիարակության դասընթացներին: Ըստ անհրաժեշտության՝ այս ցանկում կարող էին ներառվել նաև այլ առարկայական ուղղություններ: 1968թ.-ին դանիական արդարադատության նախարարությունը ձևավորեց կրթական հանձնաժողով՝ գնահատելու համար պատիժ կրող անձանց կրթական գործունեության բովանդակության և կազմակերպման արդյունավետությունը, ներառյալ մասնագիտական ուսուցման և այլ հիմնախնդիրները: Հանձնաժողովի զեկույցը հրապարակվեց 1973թ.-ին՝ եզրահանգմամբ, որ պատիժ կրող անձանց կրթությունը չի համապատասխանում երկրում հաստատված և գործող կրթական պահանջներին: Վերհանված հիմնախնդիրները լուծելու համար կառավարության կողմից նույն հանձնաժողովին առաջարկ արվեց մշակելու ՔԿՀ-ներում և դրանից դուրս կրթության բարեփոխումների պլան: Վերջինս ստացավ «Skadhauge» պլան անվանումը՝ ի պատիվ կրթության հարցերով քրեակատարողական ծառայության խորհրդականի: Այս պլանի գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ բաց տիպի հիմնարկի բանտարկյալները ցերեկային ժամերին ազատվում էին կրթական գործունեության նպատակով, իսկ փակ տիպի ռեժիմով հիմնարկներում ստեղծվում էին համապատասխան պայմաններ, որոնք պետք է համահունչ լինեին երկրում գործող ընդհանուր կրթության համակարգի որակական պահանջներին: «Skadhauge» պլանը հետագայում լայն տարածում գտավ նաև ողջ Եվրոպայում:

Նշված փոփոխությունները հանգեցրել են նրան, որ Դանիայում ՔԿՀ-ում կազմակերպվող կրթության և պետական կրթական համակարգի միջև ձևավորվել է կայուն համագործակցության ավանդույթ: Տարիներ շարունակ պատիժ կրող անձինք հանձնում են նույն քննությունները և գնահատվում նույն գնահատման սանդղակով, ինչ բանտից դուրս կրթական ծրագրերում ընդգրկված մյուս մեծահասակները: Այս մոտեցումը հատկապես ամրապնդվել է Մեծահասակների կրթության մասին օրենքի (2000թ.) ընդունմամբ, որով ՔԿՀ-ներում գտնվող դպրոցների մեծ մասին շնորհվել է «տեղական մեծահասակների կրթության կենտրոնների» կարգավիճակ, որը հնարավորություն է տալիս պատժից ազատվելուց հետո շարունակել կրթության համայնքային մեծահասակների կրթության կենտրոններում:

1998 թվականին Նորվեգիայի «Կրթության մասին» օրենքում փոփոխություններով սահմանվում էր, որ չափահասները, որոնք չեն ավարտել կամ ունեն թերի միջնակարգ կրթությունը, իրավունք ունեն շարունակելու իրենց ուսումնառությունը սեփական դիմումի համաձայն, իսկ չափահասության տարիքային շեմ դիտարկվում էր 25 տարեկանը, որի արդյունքում պատիժ կրող անձանց մեծամասնությունը (21-40 տարեկան) ստացավ միջնակարգ կրթության ամբողջական իրավունք: Այս փոփոխություններով սահմանվում էր նաև «աշխատավայրում ընդհանուր մասնագիտական կրթություն» ստանալու իրավասությունը: ՔԿՀ-ներում գործող արհեստանոցները ձեռք բերեցին «կրթական աշխատավայրի» կարգավիճակ. դրանցում ընդգրկումը հավասարազոր էր մասնագիտական կրթության ստանալու կարգավիճակին: Այդ աշխատավայրերում մեծ քանակությամբ անձանց ներգրավումը խրախուսելու համար ՔԿՀ վարչակազմն ընդգրկված յուրաքանչյուր պատիժ կրող անձի համար պետության կողմից ստանում էր հստակ չափով սահմանված լրացուցիչ գումար: Միջնակարգ դպրոցների և նման կարգավիճակ ունեցող արհեստանոցների արդյունավետ համագործակցության արդյունքում ՔԿՀ-ներում ստեղծվում էին բոլոր հնարավորություններն ուսուցման արդյունավետ և շարունակական կազմակերպման համար:

Նորվեգիայում կրթության միջոցով պատիժ կրող անձի վերասոցիալականացումը պաշտոնապես հռչակվել է որպես քրեակատարողական ծառայության երկարաժամկետ գերակայություն: Զարգացման այս փուլում, սակայն, քրեակատարողական համակարգի և դրանից դուրս գտնվող մարմինների մոտ դեռևս հստակ և միասնական պատկերացում չկար ՔԿՀ-ներում կրթության նպատակի, տեսական հիմքերի և իրականացման հնարավոր մոդելների կամ մեխանիզմների վերաբերյալ: Այդ նպատակով ՔԿՀ-ի և կրթության մարմինների միջև սերտ նախաձեռնվեցին համագործակցային առարկայական քայլեր: Որպես օրինակ՝ կարևոր սկզբունք համարվեց իրականացվող կրթական ծրագրերը համապատասխանեցնել պատիժ կրող անձանց կարիքներին, ինչպես նաև համագործակցել համայնքի կրթական մարմինների հետ անհրաժեշտ հմտությունները փոխանցելու համար: Նշված փոփոխությունների արդյունքների և ՔԿՀ-ում կրթության արդյունավետության մասին առաջին անգամ 2005 թվականին Նորվեգական կառավարությունն Ազգային ժողովում հանդես եկավ ՔԿՀ-ում կրթության վերաբերյալ հաշվետվությամբ, որում ներկայացվեց ՔԿՀ-ներում իրականացվող կրթության գործընթացի բարելավման և զարգացման ճանապարհային քարտեզ, որը կարող էր դրական ազդեցություն ունենալ նաև մյուս ոլորտների վրա: Այս հաշվետվությունից արդյունքները նպաստեցին նրան, որ որոշ ժամանակ անց Նորվեգիայում գործող 52 բանտերից 46-ում սկսեցին գործել դպրոցներ, իսկ արդեն 2008 թվականից նորվեգական բոլոր բանտերում նախաձեռվեց կրթության կազմակերպման գործընթաց: ՔԿՀ-ներում ֆորմալ կրթության համակարգում ներառվեցին տարրական և միջնակարգ դպրոցները, որակավորման բարձրացման դասընթացները, մասնագիտական ուսուցումն ու բարձրագույն կրթությունը:

1980-ական թվականներին Շվեդիայում համընդհանուր ապակենտրոնացման քաղաքականության արդյունքում ազգային գործակալություններից ՔԿՀ-ներում կրթության ֆինանսավորման պատասխանատվությունը տեղափոխվեց տեղական ինքնակառավարման մարմինների վրա: Կարճ ժամանակ անց՝ 1990թ.-ին կրթության և արդարադատության նախարարությունների

համատեղ որոշման համաձայն՝ բանտերում կրթության ֆինանսական և գործնական պատասխանատվությունը ստանձնեց արդարադատության նախարարությունը՝ ի դեմս իր ենթակայությամբ գործող քրեակատարողական ծառայության: «Մեծահասակների կրթության մասին» օրենքում իրականացվեցին փոփոխություններ, որոնցով համայնքային մարմինները դադարում էին պատասխանատվություն ստանձնել իրենց համայնքում գտնվող բանտի կրթական գործունեության համար: Արդյունքում քրեակատարողական ծառայությունը պատասխանատվություն և պարտավորություն էր ստանձնում ապահովել բանտերում պատիժ կրող անձանց՝ օրենքով նախատեսված կրթության իրավունքի իրացման նպաստավոր պայմաններ՝ վերադառնալով մինչ այդ գործող համակարգի տրամաբանությանը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քրեակատարողական հիմնարկներում գտնվող դատապարտյալների և կալանավորված անձանց համար հանրակրթական ծրագրերի (բազային ֆորմալ կրթություն) իրականացումը դրական արդյունք է տալիս վերջիններիս վերասոցիալականացման գործում (ԱՄՆ, Ֆրանսիա, Չինաստան, Մեծ Բրիտանիա, Եգիպտոս և այլն): Մասնագետները հստակ նշում են, որ վերոնշյալ անձանց հանրակրթության իրավունքի ապահովումը գործնային ազդեցություն է ունենում պետության համար. մի կողմից հանրակրթության միջոցով ապահովվում է դատապարտյալների և կալանավորված անձանց նվազագույն գրագիտության մակարդակը, իսկ մյուս կողմից այդ բազային կրթությունը միջոց է, որ այդ անձը հնարավորություն ունենա աշխատաշուկայի պահանջներին համահունչ այլ կրթական մակարդակում կրթությունը շարունակելու (ֆորմալ և ոչ ֆորմալ): Զուգահեռաբար պետք է նաև ընդգծել, որ քրեակատարողական հիմնարկներում գտնվող դատապարտյալների և կալանավորված անձանց համար հանրակրթական ծրագրերի իրականացումն էապես արդյունավետ է լինում, երբ պետությունը, բացի Սահմանադրությամբ ամրագրված պարտադիր բազային կրթությունից, միջոցներ է ձեռնարկում այդ անձանց կրթական հետագա մակարդակներում կրթությունը (ֆորմալ և ոչ ֆորմալ) շարունակելու և նրանց զբաղվածության խնդիրները լուծելու առումով, ինչի արդյունքում վերոնշյալ անձինք, իրենց նվազագույն գրագիտության մակարդակն ապահովելուց բացի, հնարավորություն են ունենում աշխատաշուկային համահունչ մասնագիտացում ձեռք բերել և որպես անհատ ինքնադրսևորվել, որը պետության համար տնտեսական (ՀՆԱ) առումով նաև դրական ցուցանիշ է ապահովում (դատապարտյալներն ու կալանավորված անձինք ռեսուրս սպառողից այն արտադրող են դառնում)[3]:

Վերոգրյալի համատեքստում խոսելով նաև հայրենական փորձի մասին՝ հարկ է նշել, որ խնդրո առարկա մտահոգությունների մի մասը հասցեագրելու նպատակով մշակել է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» լայնածավալ բարեփոխումներ նախատեսող օրենքի նախագիծ, որն Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է 2022 թվականի փետրվարի 9-ին: Նոր կարգավորմամբ նախատեսվել է դրույթ, համաձայն որի՝ մասնագիտացված և հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոն հանրակրթական ուսումնական հաստատությունների, ինչպես նաև բժշկական հաստատություններում երկարատև բուժում ստացող կամ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց համար հանրակրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների գործունեությունը և դրանց առանձնահատկությունները սահմանվում են օրենքով, դրանց կանոնադրություններով և իրավական այլ ակտերով: Նշված կարգավորումը թույլ կտա սահմանել

---

[3] https://unesdoc.unesco.org/in/documentViewer.xhtml?v=2.1.196&id=p::usmarcdef_0000111660&file=/in/rest/annotationSVC/DownloadWatermarkedAttachment/attach_import_354bdf6a-72e0-4690-96a1-9f867f1822e0%3F_%3D111660engo.pdf&locale=ru&multi=true&ark=/ark:/48223/pf0000111660/PDF/111660engo.pdf#%5B%7B%22num%22%3A403%2C%22gen%22%3A0%7D%2C%7B%22name%22%3A%22XYZ%22%7D%2Cnull%2Cnull%2C0%5D

համապատասխան առանձնահատկություններ քրեակատարողական հիմնարկներում կրթության իրավունքի պատշաճ իրացման առումով:

Մասնավորապես՝ առանձնահատկություններ նախատեսելու պահանջը բխում է հետևյալ հանգամանքներից.

1. **Անվտանգային խնդիրներ**: Ինչպես կրթություն ստացող կալանավորված անձանց և դատապարտյալների, այնպես էլ կրթական ծրագրերի դասավանդումն իրականացնող անձանց անվտանգության ապահովման պարտավորություններն օրենսդրությամբ վերապահված են քրեակատարողական հիմնարկի վարչակազմին, հետևաբար, անվտանգային միջոցառումների **գերակայությամբ** պայմանավորված՝ գործնականում անհնար է սահմանված կարգով, ժամկետներում և ողջ ծավալով իրականացնել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով և հարակից իրավական ակտերով սահմանված պահանջները:

2. **Ռեժիմային առանձնահատկություններն ու շենքային պայմանները**: Նկատի ունենալով քրեակատարողական հիմնարկների ռեժիմային առանձնահատկություններն ու շենքային պայմանները, երբ փակ և կիսափակ տիպի քրեակատարողական հիմնարկներում (ինչպես օրինակ՝ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» և «Արմավիր» քրեակատարողական հիմնարկներ) կալանավորված անձինք և դատապարտյալները պահվում են բացառապես խցային պայմաններում, գործնականում առաջ են գալու օբյեկտիվ խոչընդոտներ՝ ապահովելու միևնույն խմբում ընդգրկված անձանց միաժամանակյա ներկայությունը դասասենյակներում՝ անվտանգության երաշխիքների անբավարարության, համատեղելիության պայմանների բացակայության, խցերից դասասենյակներ ուղեկցորդում իրականացնող համապատասխան քանակությամբ ծառայողների բացակայության և նմանօրինակ այլ պատճառներով: Հիշյալ խնդիրներով պայմանավորված՝ գործնականում կարող են լինել այնպիսի խնդիրներ, որոնք խոչընդոտելու կամ անհնարին են դարձնելու պետական հանրակրթական չափորոշիչով սահմանված ֆիզիկական կուլտուրայի և ֆիզիկական դաստիարակության գործնական դասընթացներ կազմակերպելու հնարավորությունները:

3. **Տեղաբաշխման հետ կապված խնդիրներ:** Քրեակատարողական օրենսդրությամբ սահմանված հիմքերի առկայության դեպքում ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի որոշմամբ կալանավորված անձինք և դատապարտյալները պարբերաբար մի քրեակատարողական հիմնարկից տեղաբաշխվում են մեկ այլ քրեակատարողական հիմնարկ, որպիսի հանգամանքներով պայմանավորված՝ առկա չէ որևէ նորմատիվ կարգավորում, ինչը հնարավորություն կտար համապատասխան իրավական և կազմակերպչական կառուցակարգերով իրականացնել հանրակրթություն ստացող անձի կրթության շարունակականությունը նոր քրեակատարողական հիմնարկում:

4. **Առողջության պահպանման հետ կապված խնդիրներ:** Այս առումով առանձնահատուկ խնդիր է բուժական ուղղիչ հիմնարկում (ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ) պատիժ կրող կամ կալանավորված անձի հանրակրթության կազմակերպումը՝ այն հիմնավորմամբ, որ նախ՝ ստացիոնար բուժման մեջ գտնվող դատապարտյալներն ու կալանավորված անձինք չեն կարող ընդգրկվել որևէ խմբում, բուժական ուղղիչ հիմնարկում 2-3 օրից մինչև մի քանի ամիս, և բացի այդ, անհետաձգելի բուժօգնություն ստանալուց հետո կարող են տեղափոխվել ոչ թե այն հիմնարկ, որտեղից ընդունվել են, այլ հետագա բուժումը շարունակելու նպատակով տեղաբաշխվել բոլորովին այլ քրեակատարողական հիմնարկ:

5. **Ներառական կրթություն:** Քրեակատարողական հիմնարկներում ընդհանրապես առկա չեն ներառական կրթության կազմակերպման ինչպես իրավական, այնպես էլ կիրառական հնարավորություններ, ուստի և գործող ուսումնական ծրագրերով և պետական հանրակրթական չափորոշիչով այդպիսի կրթության կազմակերպումը քրեակատարողական հիմնարկում գրեթե անհնար է:

6. **Ծնողական և աշակերտական խորհուրդների բացակայությունը, կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման անհնարինությունը**: Նկատի ունենալով բազմահամակազմ և թերբեռնված դասարաններում ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները՝ ուսումնական խմբերում ընդգրկված անձանց բարոյահոգեբանական և ինտելեկտուալ զարգացվածության շեշտակի տարբերությունը, ինչպես նաև կալանավորման կամ ազատազրկման ձևով պատժի կրման օրենսդրական առանձնահատկությունները, գործնականում հնարավոր չէ ապահովել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով և հարակից իրավական ակտերով նախատեսված՝ աշակերտական և ծնողական խորհուրդներ ունենալու, ինչպես նաև կոլեգիալ կառավարման մարմին ձևավորելու օրենսդրական պահանջը:

Վերոգրյալի հաշվառմամբ անհրաժեշտ է ապահովել նաև խնդրի մնացյալ մասի հասցեագրումն ու մշակել համապատասխան իրավական ակտի նախագիծ, որով հնարավորություն կտրվի 19 տարեկանից բարձր ազատությունից զրկված անձանց ստանալ հանրակրթություն՝ հաշվի առնելով վերջիններիս դեպքում գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Նախագծով առաջարկվում է հստակ նախատեսել կարգավորում առ այն, որ պարտադիր տասներկուամյա միջնակարգ կրթության իրավունքի իրացման համար 19 տարին լրացած չլինելու տարիքային սահմանափակումը չի տարածվում քրեակատարողական հիմնարկներում ազատազրկման ձևով պատիժ կրող այն դատապարտյալների վրա, ում պատժից ազատման ժամկետի լրանալուն կրթության իրավունքի իրացման վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնելու պահին մնացել է 1 տարուց ավելի: Նշված անձինք, իրենց ցանկությամբ, կարող են իրացնել իրենց կրթության իրավունքը (միջնակարգ կրթություն ստանալ)՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

Նախագծային լուծումն ապահովելու համար հետագայում անհրաժեշտ է լինելու ունենալ համապատասխան մեթոդաբանություն, որը նախնական պլանավորմամբ լիովին համահունչ է ազգային կրթական համակարգի կողմից վարվող քաղաքականությանը: Մասնավորապես՝ համապատասխան ավարտական վկայականի համար ուսումնառություն անցնող դատապարտյալներն էքստեռն տարբերակով պետք է հանձնեն քննությունները: Ի տարբերության ընդհանուր կարգի՝ այս դեպքում քննություններին պատրաստվելու համար կձեռնարկվեն բավարար միջոցներ այդ հարցում դատապարտյալներին օգնելու, նրանց պատշաճ կերպով քննություն հանձնելուն պատրաստելու համար, որը կհամարվի պետության կողմից լրացուցիչ ներդրում դատապարտյալների մոտ կրթության հանդեպ վերաբերմունքը փոխելու և մոտիվացիա ապահովելու հարցում:

Որպես ուժի մեջ մտնելու ժամկետ՝ նախատեսվել է 2022 թվականի օգոստոսի 1-ը, ինչը թույլ կտա արդեն ուսումնական տարվա սկզբին պրակտիկորեն ապահովել ուսումնառության մեկնարկը:

3. Ակնկալվող արդյունքը.

Նախագծով ակնկալվում է ապահովել քրեակատարողական հիմնարկներում ազատազրկման ձևով պատիժ կրող անձանց կրթության իրավունքի իրական և արդյունավետ իրացումը՝ ստեղծելով անհրաժեշտ նախադրյալներ նրանց վերասոցիալականացման, աշխատաշուկայում պահանջարկ ունեցող աշխատանքի հավակնելու, իսկ վերջնարդյունքում՝ կրկնահանցագործության ռիսկի նվազեցման հարցում:

4. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Նախագծի ընդունմամբ կապահովվի ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության

միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-L որոշման Հավելված N1-ի ՀՀ արդարադատության նախարարությանն առնչվող բաժնի 15.7-րդ կետի պահանջի կատարումը, որի համաձայն՝ ազատությունից զրկված անձանց համար նախատեսվում է իրականացնել հանրակրթություն՝ անկախ տարիքից:

5. Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունները.

Նախնական հաշվարկով ծախսերը կազմում են 132436.4 հազ. դրամ: Ընդ որում, 2022 թվականին ֆինանսավորումը կիրականացվի վարկային կամ դրամաշնորհային ծրագրի միջոցով, իսկ 2023 թվականից՝ պետական բյուջեի միջոցների հաշվին: Հարկ է փաստել, որ առկա են որոշ ոչ ընթացիկ ծախսեր, որոնք ըստ էության մեկանգամյա են և հետագայում չեն հավակնելու 2023 թվականի բյուջեով առանձին հատկացում ունենալու: Միաժամանակ, հարկ է նշել, որ ծախսի հստակ չափը, ինչպես նաև կրթության գործընթացը կազմակերպելու հստակ մեթոդաբանությունը հնարավոր կլինի որոշել միայն համապատասխան ենթաօրենսդրական ակտերի ընդունումից հետո:

Հատկանշական է, որ մինչև 2022 թվականի օգոստոս ամիսը հստակ կմշակվի կրթական գործընթացի կազմակերպման մեթոդաբանությունը: Ներկայումս նախնական պատկերը հետևյալն է.

Ըստ 2021 թվականի փետրվար ամսվա դրությամբ ունեցած տվյալների՝ քրեակատարողական հիմնարկներում գտնվող թերի միջնակարգ կրթություն ունեցող դատապարտյալների թիվը մոտ 300 է: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հանրակրթական ծրագրերում ներգրավվել ցանկացող դատապարտյալների թվաքանակը կազմում է թերի միջնակարգ կրթություն ունեցող դատապարտյալների ընդհանուր թվի մոտ 1/3-ը, նախատեսվում է հանրակրթական ծրագրերի իրականացում տարեկան 100 անձի համար (ցուցանիշի համար հիմք են հանդիսացել դատապարտյալների շրջանում իրականացված հարցումները): Միաժամանակ, նկատի ունենալով կրթական ծրագրի ուղղակի շահառուների առանձնահատուկ կարգավիճակը՝ կրթության լիարժեք իրացումն ապահովելու նպատակով որոշվել է վերոնշյալ անձանց հանրակրթությունն իրականացնել լիազոր մարմնի կողմից կազմված և հաստատված խտացված անհատական ուսումնական պլանների միջոցով՝ 0.5-ից 3 տարի տևողությամբ, որպես վերջնարդյունք՝ դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունների կազմակերպմամբ: Մասնավորապես, նախատեսվում է տվյալ ուսումնական տարվա ավարտին 9-րդ դասարանի ավարտական քննություններին մասնակցելու և հիմնական կրթության վկայական ստանալու նպատակով 5, 6, 7, 8-ամյա կրթություն ստացած անձանց համար կազմել անհատական խտացված ուսումնական պլան՝ սեղմ ժամկետում կազմակերպելով նրանց ուսումնառությունը, իսկ հիմնական՝ 9-րդ դասարանի կրթություն ունեցողներին՝ 12-րդ դասարանի միջակարգ կրթության ատեստատ ստանալու համար: Ելնելով վերոգրյալից՝ մեկ անձի համար, որպես ուսման միջին տևողություն, հիմք է ընդունվել 3 ուսումնական կիսամյակը կամ 1.5 ուսումնական տարին:

Հանրակրթական ծրագրերի իրականացման շրջանակներում նախատեսվում է 6 քրեակատարողական հիմնարկներում բացել 14 դասարան: Յուրաքանչյուր դասարանում սովորողների թվաքանակը նախատեսվում է սահմանել նվազագույնը 1, առավելագույնը՝ 10 աշակերտ, սակայն, որոշ դեպքերում, կարելի է դասեր կազմակերպել ավելի շատ աշակերտների ներգրավմամբ՝ նկատի ունենալով նրանց համատեղելիության հանգամանքը: 1 աշակերտի ուսումնառության միջին արժեքը կկազմի 1324.4 հազ. դրամ (համապատասխան հաշվարկը կցվում է): 100 անձի համար հանրակրթական հիմնական ընդհանուր և (կամ) հանրակրթական առանձնահատուկ ծրագրեր իրականացնելու համար ՀՀ պետական բյուջեից առաջին ուսումնական տարվա կտրվածքով նախատեսվում է 80298.9 հազ. դրամի ընթացիկ և 11988.0 հազ. դրամի ոչ ընթացիկ ծախսերի կատարում: Ոչ ընթացիկ ծախսերը իրենց մեջ ներառում են ինչպես դասարանները, այնպես էլ կրթություն իրականացնող կազմակերպությանը

համապատասխան գույքով ու սարքավորումներով ապահովելու ծախսերը: Հաջորդ ուսումնական տարվա համար ընթացիկ ծախսերի մակարդակը, աշակերտների թվաքանակի անփոփոխ մնալու պարագայում, կկազմի նախորդ ուսումնական տարվա կեսը կամ 40149.5, իսկ 5-ից 8 տարի ոչ ընթացիկ ծախսերի կատարման անհրաժեշտություն չի ծագի՝ մինչև ձեռքբերված հիմնական միջոցների լրիվությամբ մաշվելը՝ համապատասխան դրանց համար լիազոր մարմնի կողմից հաստատված օգտակար ծառայության ժամկետի:

Ընդհանուր առմամբ, 100 անձի համար 0.5-ից 3 տարի կամ միջինը 1.5 տարի տևողությամբ խտացված ուսումնական պլաններով հիմնական և միջնակարգ կրթություն ապահովելու համար, ըստ ներկայացված հաշվարկի, նախատեսվում է ծախսել 132436.4 հազ. դրամ գումար (92286.9 հազ. դրամ + 40149.5 հազ. դրամ):

Ծախսերի հաշվարկային մեծությունների կատարման համար հիմք են ծառայել ինչպես հանրակրթական դպրոցների համար ներկայումս առկա պետական ֆինանսավորման ընդհանուր սկզբունքները և մոտեցումները, այնպես էլ մի շարք այլ գործոններ, որոնք օբյեկտիվորեն կապված են քրեակատարողական ոլորտի առանձնահատկությունների հետ և որոնք ծախսերի մեծության վրա կարող են էականորեն ազդեցություն ունենալ՝ մեծացնելով կամ նվազեցնելով դրանք: Քանի որ 2019 թվականից արդեն իսկ ՀՀ արդարադատության նախարարության կազմում գործող «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում է մինչև 19 տարեկան դատապարտյալների և կալանավորված անձանց հանրակրթական ծրագրեր, ապա ծախսակազմման գործընթացում նկատի են առնվել գործընթացում ներգրավված մասնագետների կողմից մատնանշված հիմնական այն գործոնները, հնարավորությունները և խոչընդոտները, որոնք էականորեն ազդեցություն են գործում ուսուցման արդյունավետության վրա (օրինակ՝ 1 դասարանում 10-ից ավել աշակերտների քանակը կարող է բացասաբար ազդել սովորողի ուսումնառության և դաստիարակության գործընթացի վրա, և հանրակրթական պետական չափորոշիչներին համապատասխան կրթության ապահովման մակարդակը որակապես կարող է տուժել, կամ, շատ դեպքերում, սովորողների համար, կապված մտավոր ու վարքային խնդիրներից, ուսուցանվողի՝ այլոց հետ նույն տարածքում գտնվելու հնարավորությունից ու նպատակահարմարությունից, անհրաժեշտ է կիրառել առանձնահատուկ պայմաններով կրթություն և այլն): Ուսուցումը նախատեսվում է իրականացնել հիբրիդային եղանակով (ինչպես առկա, այնպես էլ հեռավար):

Հաշվարկի մեջ ապրանքների ու նյութերի ձեռքբերման, ծառայությունների մատուցման համապատասխան արժեքների որոշման համար հիմք են հանդիսացել դրանց ինչպես 2021 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների դրությամբ առկա շուկայական միջին գները, այնպես էլ վիճակագրական հրապարակված տվյալները, նախորդ տարիներին նույն կամ նմանատիպ ապրանքների ու նյութերի ձեռքբերման, ծառայությունների մատուցման համադրելի գները:

Վարչական անձնակազմի աշխատավարձերի հաշվարկի համար հիմք են ծառայել «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի հանրակրթական ծրագրերում ուղղակի ներգրավվող և պատասխանատու ղեկավար և մասնագիտական անձնակազմի ներկայումս գործող հաստիքացուցակներով հաստատված աշխատավարձերի մեծությունները, բացառությամբ ուսուցիչների, որոնցից յուրաքանչյուրի համար սահմանվել է ամսական 200,0 հազ. դրամ՝ 1 ամբողջ դրույքային միավորի համար (շաբաթական 22 դասաժամ): Ուսուցիչների աշխատավարձը սահմանելիս նկատի է առնվել քրեակատարողական հիմնարկների՝ բնակավայրերից, հատկապես քաղաքներից տեղակայման հեռավորությունները, ինչպես նաև սովորական պայմաններից աշխատանքային միջավայրերի տարբերությունները: Աշխատավարձի այս չափի սահմանումը նպատակ ունի որոշակիորեն փոխհատուցել ուսուցչի ճանապարհավարձը և կրած դժվարությունները, չնայած

նախատեսվում է, որ ուսուցիչները հիմնականում պետք է լինեն տվյալ քրեակատարողական հիմնարկին մոտ գտնվող բնակավայրի բնակիչներ:

Հանրակրթական ծրագրերի իրականացման համար նախատեսվում է ներգրավել 6 մասնագետի, որոնք պետք է կազմակերպեն և վերահսկեն կրթության իրականացման գործընթացը, ապահովեն պատշաճ որակը, մշակեն համապատասխան տվյալներ, օժանդակեն ուսուցչական անձնակազմին:

Մեկ աշակերտին տրամադրվող գրենական պիտույքների, դիդակտիկ ու անհրաժեշտ այլ նյութերի միջին արժեքը, բացի տրամադրվող անհրաժեշտ դասագրքերի արժեքից, սահմանվել է մեկ կիսամյակի համար 4,0 հազ. դրամ, ինչը տարվա կտրվածքով կկազմի 8,0 հազ. դրամ: Ուսումնական դասագրքերի և օժանդակ գրականության ձեռքբերման պարագայում նկատի է առնվել, որ աշակերտին անհրաժեշտ դասագրքերի և այլ օժանդակ գրականության տրամադրումը կիրականացվի պետության կողմից՝ անվճար:

Հանրակրթական ծրագրերի իրականացման համար սահմանված կարգով փաստաթղթաշրջանառություն, հաշվառում և, ընդհանրապես, բնականոն գործունեություն ապահովելու նպատակով անհրաժեշտ գրասենյակային ապրանքներ և նյութեր, ձևաթղթեր, մատյաններ ձեռք բերելու համար մեկ կիսամյակի համար հաշվարկել է 250,0 հազ. դրամի ծախս, ինչը մեկ ուսումնական տարվա կտրվածքով կկազմի 500,0 հազ. դրամ:

Տրանսպորտային ծախսերը ներառում են քրեակատարողական հիմնարկներ այցելությունների, գույք և սարքավորումներ տեղափոխելու համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսերը:

Այլ ապրանքների և նյութերի գծով ծախսերը ընդգրկում են նախորդ հոդվածներում չներառված ապրանքների ու նյութերի ծախսերը (օրինակ՝ պաշտպանիչ դիմակներ, ախտահանող միջոցներ, մալուխներ, էլեկտրական երկարացնող լարեր, համակարգչային տեխնիկայի համար անհրաժեշտ պարագաներ և նյութեր և այլն), որոնք ուսումնական տարվա կտրվածքով կկազմեն 500,0 հազ. դրամ:

Գործուղումների գծով ծախսը ենթադրում է մասնագետների կողմից մարզերում գտնվող քրեակատարողական հիմնարկներ պարբերաբար կատարվող այցելությունների գծով ծախս, իսկ մեկ գործուղումը ներառում է 2 օրվա օրապահիկ՝ ընդհանուրը 6000 դրամ, մեկ օրվա գիշերակաց՝ 10000 դրամ: Ամսական կտրվածքով նախատեսվում է միջինը 4 անգամ գործուղում, ինչը 1 ուսումնական տարում կկազմի 48 գործուղում:

Կոմունալ, էներգետիկ, կապի և հեռահաղորդակցության ծախսերը ներառում են հանրակրթությունն իրականացնող կազմակերպության տվյալ ուսումնական տարվա համար նշված ուղղություններով իրականացվող լրացուցիչ ծախսերը՝ կապված գործունեության ընդլայնման, աշխատակիցների ծանրաբեռնվածության ավելացման ու նոր աշխատակիցների աշխատանքի ընդունման հանգամանքներով: Այս ծախսերը չեն ներառում քրեակատարողական հիմնարկներում դասերի իրականացման ժամանակ սենյակների ջեռուցման կամ հովացման, սպառված էլեկտրաէներգիայի, ջրի ու ջրահեռացման և նման այլ ծախսեր:

Մասնագիտական և պայմանագրային այլ ծառայությունների գծով ծախսերը նախատեսված են հանրակրթությունն իրականացնող կազմակերպության կողմից ընդհանուր բնույթի ծառայությունների գծով ծախսերի, ինչպես նաև հանրակրթության ոլորտի փորձագետ-մասնագետների ներգրավման և խորհրդատվության ծառայությունների ծախսերի փոխհատուցման համար:

Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսերը ներառում են 14 դասարանի աշակերտական և հանրակրթությունն իրականացնող կազմակերպության աշխատակիցների համար անհրաժեշտ գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսերի մի մասը: Մնացած անհրաժեշտ գույքի ու սարքավորումների անհրաժեշտությունը կլրացվի կրթությունն իրականացնող կազմակերպության տրամադրության տակ եղած միջոցներով: